Հովհաննես Շիրազ

Մի կյանք արժե

Մի կյանք արժե մի համբույրը աղջկա,
Առանց սիրո, առանց կնոջ կյանք չկա.
- Ա՛խ, չէ՛, թեկուզ դրախտն ինքը կին լինի՝
Կին կգտնես, բայց մայր երբեք չես գտնի:

Կինը սեր է, բախտաբեր է՝ թե սեր տաս,
Առանց կնոջ՝ ինձ պես անբախտ կմնաս,
Ա՛խ, չէ՛, թեկուզ բախտն էլ անհաս կին լինի՝
Կին կգտնես, բայց մայր երբեք չես գտնի:

Արևն, ասես, կնոջ աչքից կծագի,
Մի համբույրից՝ անապատը կծաղկի, -
- Ա՛խ, չէ՛, թեկուզ չեղածն ինքը կին լինի՝
Կին կգտնես, բայց մայր երբեք չես գտնի:

Կինը մահին հաղթող կյանքի աղբյուր է,
Իմ համբույրով ինձ բալիկներ կբերե, -
- Ա՛խ, չէ՛, թեկուզ աստված ինքն էլ կին լինի՝
Կին կգտնես, բայց մայր երբեք չես գտնի: